Հ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՄԵՄՈՒԱՐՆԵՐՈՒՄ

«Կյանքի բովից»-ի առաջին հրատարակության մեջ Շիրվանզադեն գրում է. «Երկրորդ մասը կամփոփի իր մեջ երիտասարդութեանս շրջանում տեսածներս ու կրածս»[1]։

Հակառակ այս հավաստիացմանը Շիրվանզադեն «Կյանքի բովից»-ի երկրորդ մասում շարադրում է իր հասուն շրջանի տպավորությունները, որոնք նա գրի է առել Եվրոպայում՝ մասնավորապես Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում եղած տարիներին (1905—1910 թթ.)։

«Գրականության տարի չէր 1905 թվականը։ Որքան ևս ամուր ներվեր ունենար գրչի մարդը, չէր կարող հանգիստ նստել գրասեղանի քով։ Եվ ո՞վ կտար նրան հանգստություն, քանի որ միջավայրը խռովվել էր... Ռուսաստանում գրեթե հեղափոխություն էր, Կովկասում առայժմ միայն ազգամիջյան ընդհարումներ և արյունահեղություն» (հ. 8, էջ 226)[2]։ Նույն միտքը մի այլ երանգով նա արտահայտում է 1910 թ. «Օտար վայրերում» ուղեգրության մեջ, դարձյալ արտասահման մեկնելուց առաջ։

Միջավայրն այնքան անհրապույր և վշտանգավոր է թվում նրան, որ տարիներ հետո, վերհիշելով այդ պահը գրում է.

«Երբեք չեմ մոռանալ այն երջանիկ ժամը, երբ առաջին անգամ ոտք դրեցի ցարական Ռուսիայի սահմաններից դուրս» (հ. 8, էջ 229)։

1905 թ. ռուսական հեղափոխության մասին Շիրվանզադեն ոչինչ չի գրում, պարզապես քաղաքականությունից խուսափելու համար։ Այդ «փոթորկված երկրի» քաղաքական միջավայրի երկյուղը շատ խոր է նստած նրա բանաստի խուցի դռոնությունը ճաշակած հոգու վրա, բայց նա չի կարողանում, և չէր էլ կարող խուսափել իրական կյանքի պատկերներից։

Կյանքի ռեալիստական ընկալման նրա մեթոդը, գեղարվեստական գործերի շարադրման, թե հուշագրության պահերին, ի վերջո նրան թելադրում է այն, ինչ կա իրականության մեջ՝ շրջապատող միջավայրում։

Բուրժուական աշխարհի համայնապատկերն՝ իր բացահայտ հակասություններով նրան տալիս է «գեղեցկուհի Ֆրանսիայի» (Մ. Գորկի) մայրաքաղաքը՝ Փարիզը։ Մեմուարիստն իր աչքերով տեսնում է բուրժուական հասարակարգի միջավայրում հասակ առած այդ «առասպելական գեղեցկուհու» ապականված մարմնի վերքերը։

«Կյանքիս մեջ միայն երկու բան իրենց գեղեցկությամբ ու հզորությամբ չեն խաբել իմ երևակայությունը — Նիագարայի ջրվեժը և Վեզուվի հրաբուխը։ Այնտեղ իրականությունն իմ ենթադրությունից բարձր է եղել։ Ինձ ավելի ապշեցուցիչ թվաց մի այլ բան — այդ խլացուցիչ ու աղմկարար փարթամության մեջ խուլ մրմնջող սովի ու անոթության հազարավոր ձայները. մուրացիկների այդ ահագին բազմությունը, որ ամեն քայլում կտրում է անցորդի ճամփան, մանավանդ նորեկ և օտարական անցորդների։ Հարկավ, ես այնքան պարզամիտ ու անտեղյակ չէի, որ կարծեի, թե մեծ քաղաքներում բոլոր որովայնները կուշտ են և ոչ մեկի ձեռը ամոթահար չի պարզվում մի ուրիշի առջև «հանուն աստծո» կամ «հանուն խղճի»։ Գիտեի, որ չքավորությունն ամենուրեք մարդկության խոցն է, բայց չգիտեի, որ նրա պատկերներն այդչափ բազմատեսակ են, այդչափ այլանդակ և այդչափ ամոթալի» (հ. 8, էջ 235—236)։

Հասարակական կյանքի հակասություններն այնքան ճչացող են ու խոր, որ մեմուարիստը աղքատության ծայրահեղությունը համեմատում է Նիագարայի վեհության ու հզորության հետ. իսկ նրանից սպասվող վտանգը՝ Վեզուվի պատճառած տագնապի հետ։ Այս համեմատությունն-

---

1 Շ ի ր վ ա ն զ ա դ ե, Ժողովածու երկերի, հ. 4, Թիֆլիս, 1912, էջ 430։

2 Այս և հետագա մեջբերումները «հ. 8» նշմամբ կատարված են Շիրվանզադեի Երկերի լիակատար ժողովածուի 1951 թ. հրատարակությունից։

ները կամ ավելի շուտ դրանք կողք-կողքի դնելը՝ երևույթը պատկերացնելու դիտավորությամբ, ամենևին էլ պատահական չէ։ Շիրվանզադեն հետևողականորեն նկարագրում է հարստահարության պատճառած հետևանքները։ Փարիզի կուշտ դասակարգի աչքերի առաջ տեղի են ունենում աներևակայելի անձնազոհություններ, հանուն մի պատառ հացի։ Գոյության կռիվը մարդուն հարկադրում է դիմել ամեն ինչի։ Ընթերցողի հիշողությունից երկար ժամանակ չեն հեռանում նույնիսկ այն անանուն կերպարները, որոնց հեղինակը բնութագրում է ընդամենը մեկ նախադասությամբ կամ մեկ պարբերությամբ։

Ահա մի տխուր պատկեր՝ շռայլության մեջ ճոխփացող Փարիզից։ Առաջնակարգ կաֆեների մեկի առաջ հազիվ քսան տարեկան մի տղա, որը մարմնավոր թերություն չունի, աշխատանքի կարող, բայց աշխատանք չունի, գրավել է անցորդների ուշադրությունը։ Կարիքը նրան թելադրել է առողջությանն սպառնացող մի ծանր զբաղմունք։ Ձեռքի փայտի կտորը, որի ծայրին լաթի կտոր կա փաթաթված, թաթախում է նա նավթով լի սափորի մեջ և մտցնում բերանը։ Այդ սարսափելի «հմարը» մի քանի անգամ կրկնելուց հետո նա նավթ է լցնում բերանը և վառում։ Բոցը խուլ պայթյունով դուրս է գալիս նրա բերանից։ Շուրջը հավաքված ամբոխը հեռանում է «անտարբեր ու հեգնորեն ժպտալով» գունատ ու հուզված այդ երիտասարդից, երբ նա գլխարկը պարզում է նայողներին՝ իր «վարձը» մուրալու։ Այնուամենայնիվ, մի քանիսը պղնձե դրամներ են գցում գլխարկի մեջ։ Քաղցը և հոգեկան տառապանքներն այդպես աղավաղում են մարդկանց և անտարբերությամբ շպրտում փողոց։

Ավելի ծանր է կարիքի ճիրանների մեջ նետված աղջկա և կնոջ վիճակը։ Քաղցն ու ցուրտը ի վերջո հանձնում են նրանց պրոստիտուցիայի անողոք ճակատագրի քմահաճույքին։ Կոնկրետ, լենդանի փաստերով Շիրվանզադեն մատնացույց է անում բուրժուական աշխարհի ակնհայտ հակասությունները՝ մի կողմում «կշտություն», «ինքնագոհություն», մյուս կողմում՝ ահավոր, սրտամաշ աղքատություն։ «Նիհար, գունատ ու կծկված» մի ծերունի խաղալիքներ է վաճառում, մյուսը՝ մի այլ բան։ Բայց ցրտի ու կարիքի մեջ խարխափող այդ թշվառների հառաչանքներն ի վերջո սովորական են դառնում նույնիսկ օտարականի համար։ Սովորական են դառնում նաև «հարյուրավոր ու հազարավոր գիշերային «թիթեռները» որոնք «թանձր շպարած երեսների յուղոտ ժպիտներով» առաջարկում են իրենց «լլկված ու կազմալուծված» մարմինները Փարիզի կրոսայգիներում ու կավատների առաջարկած տներում։ Դրանք «բուրժուական աշխարհի հովիտենական զոհերն են, որոնց հղփացած Փարիզը հազարներով է շպրտել այդ պճնազարդ բուլվարների վրա, հարկավ կանխավ քամելով նրանց թարմ հյութը, ճիշտ այնպես, ինչպես վամպիրն ծծում իր զոհին, երբ արդեն կշտացել է նրա արյունով» (հ. 8, էջ 237)։

Կան ավելի վատթարագույն փաստեր, որոնք հոգեհարազատ են բուրժուական աշխարհի այդ ամոթալի միջավայրին։ Մեմուարիստը հրապարակում է դառն ճշմարտություններ. նա դեն է նետում բուրժուական քաղաքի պճնազարդ քողը և իր կշտամբող ձայնով անարգում նրա իսկական էությունը։

Կան և փաստեր, որոնց չի կարող ընտելանալ ոչ միայն տեսողությունը, այլև մարդու հոգին։ Դրանք տակնուվրա են անում մարդու հոգեկան աշխարհը, «գրգռելով նրա ծայրագույն նողկանքն ու զզվանքը»։ Կանայք հաճախ իրենց մարմինները վաճառքի են հանում միջնորդների միջոցով։ Նուլ'ալի առևտրի այդ միջնորդները լուսանկարներով ռեկլամում են մատուցվելիք «ապրանքը», որը գայթակղում է հատկապես օտարականին։ Իսկ փարիզցին «նորեկի քայլվածքից ու դեմքի շվարած արտահայտությունից» իսկույն զգում է, որ օտարականը ծանոթ չէ քաղաքի վարք ու բարքին։ Կավատի ամոթալի զբաղմունքը նա սքողում է quide (առաջնորդ) անվան տակ և կատարում իր դերը, որին դարձյալ մղել են կարիքն ու շվայտության ազատ, անկաշկանդ դարձած նողկալի սովորույթը։

«Նայեցեք, դիրքերի մի ամբողջ սերիա, և բոլորը թարմ, սկսած ինը տարեկանից... գնանք. չեք ղղջա, շատ զոհ կմնաք, երաշխավոր եմ» — հրավիրվող անձի քթին մոտեցնելով կանանց մերկությունը ցուցադրող լուսանկարները, ասում է կավատը և առաջարկում իր «ծառայությունը»։

Ահա ինչի համար են երաշխավորում հաճախ «պատկառելի տարիքով» մարդիկ բուրժուական աշխարհում։

Ճշմարտությունն ինքը մերկ է, բայց ավելի է մերկանում մեմուարիստի գրչի տակ։ Այս տխուր փաստերը մեմուարիստը շպրտում է բուրժուական աշխարհի երեսին՝ որպես նրա այլանդակ բարքերի պտուղներ։

Մեմուարիստը թեև թոուցիկ, էպիզոդներով, բայց փորձում է տալ նաև Փարիզի աշխատավոր մարդուն, որի «առասպելական խնայողությունը հաճախ հասնում է ժլատության» (հ. 8,

էջ 240)։ Առաջին աշխատավոր մարդիկ, որ արժանանում են մեմուարիստի դրչին, սրճարանների ոպասավորներն են, որոնք առավոտյան ժամը 8-ից աշխատում են մինչև գիշերվա ժամը 2-ը, այսինքն տասնչ-թ ժամ. և առանց աշխատավարձի։ Հաճախ իրենք են վճարում սրճարանի տիրոջը՝ ափսե կամ բաժակ կոտրելու համար, նույնիսկ այն ժամանակ, երբ չեն կոտրում։

«Նրանց վարձը «պուրբուարն» է, այն տասը տոկոսը, որ այցելուն շպրտում է նրանց շատ անդամ մտքում տրտնջալով» (հ. 8, էջ 251)։

Դա է սրճարանի աշխատողի վաստակը։ Բայց դա այն աշխատավորն է, որին նախանձով են նայում քաղցի մատնված, բորսայում աշխատանք աղերսող մշակը և «կաբարե»-ների, «բիստրո»-ների շուրջը պտտվող «գիշերային թռչնիկները»։

Շիրվանզադեն առանձնակի ուժով է տալիս հարյուր-հազարավոր այդպիսիների կյանքի ողբերգական պատկերը, նրանց համեմատում է պարսկական ճանապարհեզրերի այն բորոտների հետ, որոնք վոնդված են կյանքից, հասարակական միջավայրից և դատապարտված սովի նվաստացնող տխուր ճակատագրին։

Դրանք «բուրժուազիայի առօրյա ապականության, կեղտերի ու ոճիրների զոհերն են, նույն բուրժուազիայից հալածված»,— գրում է Շիրվանզադեն (հ. 8, էջ 271)։ Եվ գիշերային այդ «թռչնիկները» ուրիշ կերպ չեն կարող վրեժխնդիր լինել փողից նետող հարուստներից, քան այն, որ հաճախ «իրենց մարմնավոր ախտերով» վարակում են նրանց «գիտակցաբար կամ գիտակցելով, որ մարդկությանը վերադարձնում են այն, ինչ որ ստացել են նրանից» (հ. 8, էջ 272)։

Աշվառ կացության մեջ է բանվորը, մշակը։ Նրա օրավարձն այնքան է, որ «հազիվ-հազ փրկում է նրան սովամահ լինելուց» (հ. 8, էջ 275)։ Այնքան քիչ է այդ օրավարձը, որ աշխատանքից հետո նա հարկադրված և... սրտի դողով հավաքում է շուկայի վաճառասեղանների դարակներից դեն շպրտած մսի կտորները, և ձկների հոտած գլուխներն ու պոչերը։

Կապիտալի աշխարհում հարստությունը կուտակվում է մի խումբ մարդկանց ձեռքում, իսկ հասարակության մեծագույն մասն այդ թշվառ պայմաններում է։

Շիրվանզադեն արվեստագետի նրբանկատությամբ է նկարագրում Փարիզի շուկան։ Տիպիկ շտրիխներով բնութագրում է գնորդներին ու վաճառասեղանի առաջ կանգնած «իրենց իրավունքների գիտակցությամբ դողող» ապրանքատերերին։ Բայց այդ բոլորն այնքան ազդեցիկ տպավորություն չեն թողնում, որքան մսավաճառները, որոնք «լայնասայր դանակներով և արյունաներկ շապիկներով նմանվում են պարսկական ֆառաշների»։ Օրվա վերջում նրանք դեն են ձգում իրենց արյունաշաղախ շապիկները, նստում «անկիզելի սնդուկների» առաջ, հաշվում օրվա «վաստակը»։

Եվ այս բոլորի կողքին մթերքների ու բանջարեղենի մնացորդների ապականության մեջ մուրացկանները «անտեր շների ու կատուների և առնետների ընկերակցությամբ» որոնում են իրենց օրվա պարենը։

Սրանք տխուր հակապատկերներ են՝ մի կողմում հաստավոր, հաստասպարանոց, կարմրերես մարդիկ. ցոփության և անտարբերության աստիճանի կշտություն, մյուս կողմում կարիքը՝ մուրացկանի տխուր կերպարանքով։

Բայց շուկայի խորհրդավորությունը թաքնված է նրա ներքնահարկերում, ուր կավատներն ու վհուկներն իրենց ննկ որոգայթներով շահագործում են անդամ ապաշներին։ Այնտեղ գեղեցկուհիները կարթախայծերի նման դայթակղում, դեպի իրենց են քաշում օտարականներին (և ոչ միայն նրանց) ու կողոպտում։

Փարիզի օրինակով մեմուարիստը տալիս է բուրժուական աշխարհի դասակարգային շերտավորումը։ Նրա մեմուարներում, ի վերջո, Փարիզը ներկայանում է երկու տեսքով՝ խոսքը նրա արտաքին տեսքի ու գեղեցկության մասին չէ, այլ նրա բուն բովանդակության։ Առավոտյան վաղ արթնանում է Փարիզը, արթնանում է, բայց «ոչ հղկված, շպարված, ոչ արյունն ծծող, ոչ ըստ արհեստի ոճրագործ, ըստ էության լկտի ու անպատկառ Փարիզը — բուրժուազիան, այլ աշխատավոր Փարիզը — պրոլետարիատը։ Այն, որ արեգակի ծագումից սկսած մինչև նրա մուտքը և էլի ավելի տքնում է աշխատանքի երկաթյա լծի տակ։ Այն, որ շինում է և չի շահվում, ստեղծագործում է և չի վայելում, այն, որ տալիս է ոսկու բեռեր և ստանում է պղնձյա գրոշներ» (հ. 8, էջ 279—280)։

Կապիտալի աշխարհի ծաղկող քաղաքի այս գորշ պատկերները չեն հուսահատեցնում մեմուարիստին։ Նա լավատես է, լի ապագայի հավատով, նա գիտե, որ մարդկությունը երկար ժամանակ չի կարող մնալ «փխրուն ու փտած կամուրջի վրա»։

Շիրվանզադեն բուրժուական աշխարհը պատկերացնում է մի յուրօրինակ կամուրջ, անցման մի ժամանակաշրջան, որի վրայով մարդկությունը պիտի անցնի դեպի իր լավագույն ապագան

բայց ե՞րբ, ինչպե՞ս, դրա արագացնողը, հասունացնողը դարձյալ ինքը աշխատավոր մարդը պետք է լինի՝ իր կոշտացած ձեռքերով։

Այս միտքը նա արտահայտում է նաև մեկ այլ առիթով։ Նավը կանգ է առնում Միջերկրականի ափին՝ Ալժիրում։ Ածխակիր նավերի մոտ հայտնվում են նիհար ու պղնձագույն կուլիները, որոնք իրենց վտիտ ուսերի վրա համբերությամբ կրում են սև, տաժանակիր աշխատանքը, ինչպես եգիպտական ֆելլահները։ Ածուխի կապարե ծանրության տակ երգում է կուլին, զվարճախոսում։ Նրա միտքը շրջանակված է օրվա հացի հայթայթման տխուր ճակատագրով. ածուխի ծանր բեռի տակ նա ժամանակ չունի ուղղելու իր մեջքը, որ տեսնի, թե ինչպես է իր հարստահարված հայրենիքը հեծում օտարների բռունցքի տակ։

Նայում է մեմուարիստը նրանց և սրտի ցավով գրում. «Ո՞վ գիտե, գուցե ապագա պատմությունն այդ ածուխի սև փոշիով մրոտի նույն օտարի տիրապետությունը, իբրև հալիտենական նախատինք մարդկային անարդարության» (հ. 9, էջ 285)[3]։ Մեծ է համակրանքը աշխատավոր մարդու նկատմամբ։ Մեմուարիստը զրույցի է բռնվում շուկայում կեր որոնող մուրացկանի՝ աղբարկղներում բախտը որոնող chiffonnier-ների հետ, որը դուր չի գալիս Սոմիկոյին։ Հայ բուրժուային վրդովեցնում է այն հանգամանքը, որ հայ գրողը Փարիզի նման քաղաքում ապրելու և քեֆ անելու գերագույն հաճույքից իրեն զրկելով, հետաքրքրվում է «դատարկ բաներով» «աղբավաճառներիս» և մուրացկանների կյանքով ու ճակատագրով։

Բուրժուական հասարակարգի ծնունդ են դրանք, այդ «անպետք մարդիկ»։ Եղել է ժամանակ, որ նրանք միլիոններ են աշխատել տիրոջ համար, հարստացրել նրա գանձարանը, բայց ֆիզիկական կարողությունը սպառվել է և աշխատունակությունը կորցնելուց հետո տերը նրանց նետել է փողոց՝ ճակատագրի ողորմածությանը։ Խոնավ կացարանը և գերմարդկային լարված աշխատանքը կաֆեի դարսոնին ի վերջո ուժասպառ է արել։ «Հանգամանքներն» ստիպում են նրան թողնել կաֆեն և աղբարկղների քաոսում ուրիշի կորցրած ակնեղեն ու լաթեր որոնել։

Բուրժուական հասարակարգի քաոսի վայրագ մրցույթում դեռևս մարդիկ կան, որ չեն կորցրել հույսը։ Այդ մրցույթը տեղի է ունենում հասարակական միջավայրի տարբեր ոլորտներում։

Մեմուարիստն այստեղ չի խորանում ֆինանսական և արդյունաբերական կապիտալի անսահմանափակ տիրապետության ոլորտները։ Նա էպիզոդիկ նկարագրում է կապիտալի աշխարհի տիպիկ օբյեկտներից մեկը, ուր այնքան բնորոշ ձևով, մի փոքր այլ նրբերանգով շարունակվում է այդ վայրագ մրցույթը, ուր «տանել տվածն ու տարածը հասնում է միլիոններիս» (հ. 8, էջ 285)։

Այդ, այսպես կոչված, «Hausmann»-ներում[4] իրենց բախտն են փորձում «ոչ միայն պրոֆեսիոնալ բախտախնդիրները, անգործ ու անարվեստ երիտասարդները, կյանքից խաբված ծերունիները, անցյալ և ներկա կավատները, ապաշները, գողության համար պաշտոնից զրկվածները, գրպանահատները, սրիկաները, այլև շատ գրողներ, բանաստեղծներ, հայտնի և անհայտ նկարիչներ, դերասաններ, երգիչներ, երաժիշտներ, արձանագործներ, նույնիսկ պատկառելի դիտնականներ ու պրոֆեսորներ... խաղում են նաև նրանք, որոնց անկիզելի ունդուկներն առանց այդ էլ ճարճատում են ոսկու ծանրությունից — ամերիկյան միլիարդերները։ Ինչո՞ւ։ Այն պարզ պատճառով, որ ազարտ խաղը նրանց տալիս է հոգեկան խորին բավարարություն, որ նրանց համար երջանկության չափ հաճելի է տասնյակ հիմարներին ու ապուշներին կողոպտել ու փողոց նետել (հ. 3, էջ 285)։

Դայթակղիչ է բուրժուական աշխարհի մրցույթի մոլեխաղի այդ ձևը, որը դրամի հնչուն կախարդանքով հմայում և ի վերջո կլանում է իր զոհերին։

Բուրժուական աշխարհում թղթախաղի վրա են դրվում ոչ միայն միլիոնավոր մարդկանց քրտինքով ստեղծված, կողոպտված ոսկիները, այլև մի թշվառ ժողովրդի ճակատագիր՝ նյութական հզորության ու բարոյական ոգու բարձրացման սուրբ նպատակի համար հանգանակված դումարները։

Շիրվանզադեն այս առիթով էլ է անդրադառնում հայկական հարցին. մի փոքր վերապահումով նա հրապարակում է այն դառն ճշմարտությունը, որ դաշնակցության պարագլուխները հայ ժողովրդի ոչ միայն նյութական, այլև գաղափարական, քաղաքական կողմնորոշումը, մինչև իսկ ֆիզիկական գոյությունը դրել են խաղաթղթի վրա։ Փարիզի Օսման խաղատունը

---

3 Այս և հետագա մեջբերումները «հ. 9» նշմամբ կատարված են Շիրվանզադեի երկերի ժողովածուի 1961 թ. հրատարակությունից։

4 Խաղատներ, կլուբներ, ուր մարդիկ զբաղվում են մոլեխաղերով, մեծ մասամբ թղթախաղով։

Բաքվից փախած մի դաշնակցական տանուլ է տալիս 300 հազար ֆրանկի չափ գումար։ Դաշնակցական կառավարության Փարիզի պատգամավորությունը խնամքով սքողում է այդ խայտառակությունը, որ չընկնի իրենց վարկը ժողովրդի աչքում, բայց լուրը բերանից բերան տարածվում է։

Բուրժուական այդ քաղաքում կան և այլ կարգի գողեր։ Դրանք «սովորական» գրպանահատներն են, որոնք ձեռքները կոխում են ուրիշների գրպանը և հաճախ չկարողանալով ժամանակին հանել, արժանանում են ոստիկանության ուշադրությանը։

Բուրժուական ծախու մամուլը աչքը փակում էր նման փաստերի դեմ։ Թերթերն իրենց տերերին ծառայում են որպես «վաճառքի ելած պոռնիկներ»։ Մինչդեռ շատ հետաքրքրական են ոստիկանության քրոնիկոնները, որոնք տպագրվում են դեռևս «չծախված» թերթերի էջերում. ահա մի նմուշ թերթի մեկ օրվա ոստիկանական հաղորդագրությունից։ «Դիշերվա ընթացքում պատահել են ընդամենը երեք արկած—մի ինքնասպանություն անոթության պատճառով, երկու ոպանություն, մեկը սիրային հողի վրա, մյուսը կողոպուտի համար» (հ. 8, էջ 287)։

Սա է հավասարություն, եղբայրություն, ազատություն լոզունգներով առաջնորդվող ֆրանսիական բուրժուական հանրապետության առօրյան։

Տարիներ առաջ և հետո հասարակական ներհակություններին անդրադառնալով Շիրվանզադեն բերում է ավելի տխուր պատկերներ նաև Բաքվից, ուր նավթաշխարհի բանվոր դասակարգը խարխափում էր խավարի ու տգիտության մեջ, ուր մարդկային հարաբերությունների մեջ իշխում է կանխիկ հաշվի պրակտիկան, ուր եղբայրություն, հավասարություն, ազատություն հորջորջվող միջավայրում կոլոպտում, շահագործում է մարդը մարդուն, նրա արյուն-քրտինքով հարստանում և փողի իշխանությամբ բռնաբարում իր հարյուրավոր զոհերի կամքն ու իրավունքը։

«Իմ աչքերի առջև մարդ էակն իր նմանի կոկորդը բռնած, պատին սեղմելով, խեղդում էր և ոչ մի անցորդ չէր փորձում խեղդվողին ազատել... Թավալելով տկարներին զորավորներն անցնում էին առաջ առանց ետ նայելու, շատ անգամ իրանց զոհերի դիակը կոխկրտելով երկաթե կրունկներով» (հ. 8, էջ 84)։

Դժվար չէ նկատել, որ խոսքն այստեղ փողոցում տեղի ունեցող քրեական հանցագործության մասին չէ, ոչ էլ դեպքի վրայով անցնող «անցորդի»։ Հեղինակը նկատի ունի բուրժուական աշխարհի ընդհանուր միջավայրը, որի «երկաթե կրունկների» տակ հեծում է աշխատավորը։

Փողի իշխանությունը և փողի կարիքը՝ տրամագծորեն հակառակ այդ հակապատկերները տպավորվում են նրա ուղեղում տակավին երիտասարդ հասակում, երբ նա նոր էր ոտք դրել Բաքու։

Շատ հետաքրքրական ու բնորոշ է այն պահը, երբ նա հարկադրված թողնում է աշխատանքը, իսկ մայրն ու քույրը նրա աշխատավարձի հույսով գալիս են Բաքու։ Նա չի կարողանում վճարել կառապանի վարձը։ Այդ պահին ամեն ինչի պատրաստ էր նա, միայն թե կարողանար վճարել կառապանի վարձը։ «Ազնիվ մարդը իստակ անուն չի կարող պահել առանց փողի»... մարդ-անհատը միջավայրի արդյունք է, մարդու հոգեբանությունը՝ նույնպես։ Միջավայրի վայրագ հարաբերությունները, ունեզրկությունը, կարիքը ազնիվ մարդուն դարձնում է անազնիվ, գող։ Ահա այն եզրակացությունը, որին հանգում է ռեալիստ գրողը Բաքվից ստացած դեռևս իր առաջին տպավորություններից հետո։ Տարիներ անց այս միտքն ավելի պարզորոշ նաստում է Սուսանի և Սուսամբարի զրույցում, իսկ այնուհետև «Ակոյի տոնածառը» պատմվածքում։

Ծանր են Բաքվից ստացած տպավորությունները. «Երբ գիշերները երազումս տեսնում էի, որ նորեն Բաքվում եմ, սարսափած զարթնում էի և ուրախանում, երբ զգում էի, որ դա երազ է» (հ. 8, էջ 105)։ Այդքան մռայլ են եղել արդյունաբերական Բաքվից ստացած տպավորությունները։ «Արագ հարստանալու տենչը», «սպեկուլասիոնի ապականիչ ոգին» բուրժուականացող այդ քաղաքում «վարակել է ամենքին», «երեկվա շինականից մինչև համալսարանականը»։ Ոսկին չնչել է բոլոր սրբությունների սահմանները։ «Դայլի ախորժակով» հարստանալու մրցավազքի մեջ էր մտել բարեկամը՝ բարեկամի, եղբայրը՝ եղբոր, որդին հոր դեմ և «պատրաստ էին իրարու կոկորդը կրծոտել»։ Այդ «այլանդակ քաոսից» է Շիրվանզադեն վերցնում «Քաոս»-ի նյութը, որի գաղափարը հղացել է նրա մեջ տարիներ առաջ, անմիջական տպավորությունների տակ, երբ ապրում էր Բաքվում։ Այդ ծավալուն երկի մեջ նա ներկայացրեց բուրժուական աշխարհի քաոսի համայնապատկերը։

* *

Բուրժուական աշխարհում փողով է գնահատվում ամեն ինչ։ Ամեն ինչ ենթարկվում է նրա ամենազոր իշխանությանը, այդ թվում և արվեստն ու գրականությունը։ Ով պայքարում է իրականությունը ճշմարտացիորեն պատկերող իսկական արվեստի համար, նա դառնում է այդ պայքարի

զոհը։ Շիրվանզադեն բերում է բավականաչափ տխուր օրինակներ։ Հիշատակենք իսկական արվեստի համար մարտնչող նահատակներից մեկին՝ Անդրեաս Տեր-Մարուքյանին (Խ. Աբովյանի արձանի հեղինակը), որ այնպես վաղաժամ մեռավ թոքախտից կամ, ճիշտն ասած, «անոթությունից»։ «Դժբա՜խտ մարդ, որպիսի՜ տառապանքներ ու զրկանքներ կրեց նա հանուն գեղարվեստի»...,— գրում է Շիրվանզադեն։

Այլ է ճակատագիրը նրանց, ովքեր արվեստը հարմարեցնում են իշխող դասակարգի ճաշակին։ Նրանք բնականարար հարստանում են և հաղթում բիզնեսի մրցույթում։ Ցուցահանդեսներում այցելուներ, վաճառասրահներում գնորդներ ունենալու համար այդօրինակ արվեստագետները կարող են ցուցադրել և ցուցադրում են մինչև իսկ Վիլհելմ երկրորդի մերկ մարմինը պատկերող նկարը կամ «իշի պնչով» մրոտված սենսացիոն «կտավներ», և այն էլ ոչ սովորական վաճառախանութում, այլ «անկախ» արտիստների ցուցահանդեսում, որի դռները բաց են ամենքի համար։

Փողը, Շեքսպիրի խոսքերով ասած, այդ համաշխարհային պոռնիկը, իր իշխանության տակ է առնում ամեն ինչ, անգամ աստծո երդվյալ սպասավորներին։ Եվ հասարակության մեջ փառաբանվում են նրանք, ովքեր տեղ չպիտի ունենան հասարակության մեջ, ովքեր արժանի են միայն պարսավանքի։

Փարիզի եկեղեցիներից մեկում մեմուարիստը ականատես է լինում մի հետաքրքիր միջադեպի։ Պատարագը վերջանում է, իսկ ժողովուրդը չի ցրվում։ Հետաքրքրվում է. ի՞նչ արտաքնկարգի բան է պատահել։

— Միթե չգիտե՞ք... տոնվում է Ն...-ի ծննդյան յոթանասունամյակը,— լրջությամբ պատասխանում է մի երիտասարդ։

— Բայց ի՞նչ կապ ունի այդ մարդու ծննդյան տարեդարձը եկեղեցու հետ։

— Ի՞նչպես չէ, հարուստ է։

«Հարուստ է»։ Այս «մոգական» բառը առանձին շեշտով ու զգացմամբ արտասանում են ոչ միայն գաղթական հայը, այլև ռամկավար, դաշնակցական, հնչակյան և հայ մյուս կուսակցությունների լրագրերը, որոնք որևէ առիթով արժանացել են հարուստի ողորմածությանը։ Մեմուարիստն այնպիսի նրբերանգներով է տալիս «հարուստի» հանգանակության նման դրամ տալու պրոցեսը, ասես բոլոր «բարեգործ» հարուստները կանգնած են քո առաջ։

Հայ վաճառականությանը և հայ եկեղեցուն Շիրվանզադեն դնում է մի դագաղ. մեջ. «միասին ծնվել են և միասին էլ մեռնելու են» (հ. 8, էջ 363)։

«...Դերասան էր հայ եկեղեցին, դարեր կատարեց իր դերերը մերթ ողբերգական, մերթ կոմիկական, և այժմ նա զառամել է, այժմ նրա ատամները փտել են, նրա խոպոտ ու քայքայված ձայնն այլևս չի հասնում ժողովրդի լսելիքին և չի շարժում նրա սրտի և հոգու ոչ մի թել, դոնե այնպես, ինչպես գուցե երևակայում է ինքը։ Նա պիտի հեռանա հայ կյանքի բեմից և արդեն հեռանում է, իհարկե, ոչ ինքնահոժար, այլ պատմության անողոք մտրակով, ժամանակի խստաշունչ փոթորիկով...» (հ. 8, էջ 291)։

Շիրվանզադեն անողոքաբար մտրակում է նաև հայ վաճառականությանը։ «Հայ ժողովրդի կատաղի թշնամին» հոդվածաշարով նա արդեն ցնցել էր Անդրկովկասի վաճառականական դասին։ Սակայն նա դրանով չի բավարարվում։ Դեմոկրատ գրողը հետևողականորեն շարունակում է իր պայքարը ազգի անունից խոսող և ազգի անունը վարկաբեկող այդ պարազիտային խավին։ Նա բազմաթիվ օրինակներ է բերում նաև հայ գաղթօջախներից, որոնց ականատես է լինում իր արտասահմանյան ուղևորությունների ժամանակ։

«Ես միանգամայն ծիծաղելի աշխարհայեցողության արդյունք եմ համարում այն ընդհանրացված կարծիքը,— գրում է նա,— թե հայ վաճառականությունը հեռավոր երկրներում կուլտուրական դեր է կատարել» (հ. 8, էջ 361)։ Մի մատուռ կառուցելը, մի տպարան բանալը և կրոնական կամ առևտրական բովանդակությամբ գրքեր հրատարակելը դեռևս քիչ են այն «ծանր ու տխուր» հակակշռին, որով օտարները հայ ժողովրդի բարոյական պատկերի մասին չափազանց վատ և «վերին աստիճանի վիրավորական դաղափար են կազմել» հայ վաճառականության պատճառով։

Շիրվանզադեն, որ այնքան դրվատանքով է խոսում ամերիկահայ գաղթօջախի և իրենց վարկը գնահատող հայ հարուստների մասին, դարձյալ վկայակոչում է տխուր օրինակներ, թե ինչպես հայ վաճառականների շահամոլության և խարեբայության պատճառով հարցականի տակ է դրվել ամերիկահայ գաղութի ճակատագիրը։ Ահա տիպիկ մի օրինակ։

Մի հայ գորգավաճառ Հյուսիսային Ամերիկայում «խարեբա գնելով» վաճառում է մի քանի գորգեր։ Խաբեբայությունը բացվելուց հետո ամերիկացին փորձում է վերադարձնել գորգերը նույնիսկ 25 տոկոս գիջումով։ Գորգավաճառը մերժում է։ Ամերիկացին առժամանակ լռում է։ Բայց ահա մեկ օր գորգավաճառին անհրաժեշտ է լինում վերցնել առևտրական վկայագիր, կա-

ռավարությունը մերժում է. ավելին, վկայագիր տալու փոխարեն, ղրկում է առևտրականի իրավունքից։ Գործը դրանով էլ չի վերջանում։ Հարց է ծագում. արդյոք հայերն իրավունք ունե՞ն առևտրով պարապելու կամ Ամերիկայում ապրելու, նրանք ճերմակ ցեղ են, թե՞ սևամորթ։ Մեծ դժվարությամբ՝ գիտնականների, փաստաբանների և պատմաբանների միջոցով ապացուցվում է, որ հայերը կարմրամորթներ կամ սևամորթներ չեն։ Եթե դա չապացուցվեր,— գրում է մեմուարիստը,— ամերիկյան ամբողջ հայությունը, որի 95 տոկոսը բանվորներ են, պետք է հալածանքի ենթարկվեր կամ վտարվեր Ամերիկայից։

«Փարիզի հայ գոհարավաճառները և հնավաճառները (antiguaire) իրենց բարոյական նկարագրով գրեթե նույնն են, ինչ-որ Ամերիկայի գորգավաճառները կամ առհասարակ բոլոր վաճառականները»... Ահա նրա վերջնական եզրակացությունը։ Բուրժուական աշխարհի «կորզիր առանց միջոցների խտրության» սկզբունքը չէր կարող շրջանցել հայ վաճառականությանը։ Դասակարգային հասարակության մեջ արտադրամիջոցների տերերը երբեմն-երբեմն ցուցադրաբար «ողորմելի գրոշներ» են զոհել ազգային կամ հասարակական նպատակով, հանուն իրենց գոյության։

Շիրվանզադեն խոր ատելությամբ է լցված և հայ բուրժուազիայի նկատմամբ։ Նա անձնական ծանոթություն է ունեցել նրանց հետ, որոնց «դեմքը շատ էլ մրոտ չէր»։ Բայց ճանաչել է բոլորին և վերհիշել յուրաքանչյուրին «գեղարվեստական ամբողջությամբ» իր գործերը շարադրելիս, ուր հրապարակ քարշ տալով ներկայացրել է «ապագա սերունդների անարգանքին»։

Շիրվանզադեն մեծ հոգեբան է ոչ միայն իր գեղարվեստական «մաքուր ժանրի» գործերում, այլև մեմուարներում։ Նա հոգեբանական նուրբ վերլուծություններ է կատարում ոչ միայն հղփացած բուրժուաներին, այլև «մագազինների հրապույրով» գայթակղված իշխանազուն կանանց բնութագրելիս. կանայք, որոնք իրենց պարապությունը մեղմելու համար զբաղվում են մոլեխաղերով և պատրաստ են թղթախաղի վրա դնել իրենց ազնվականական պատիվը։

Հոգեբանական նուրբ դիտողություններով, մեղմ հումորով և քաղաքական սատիրայի այլևայլ ձևերով նա ձաղկում է ազարտ խաղի երկրպագուներին նզովում այդ խաղի մութ բովանդակություն ունեցող տները, որոնք շատ տներ են քանդել և շատ մարդկանց անբախտացրել։

«Գյուղացու դառը քրտինքի վաստակը» այսպես կոչված, «կապալավարձը» մտրակի ուժով հավաքելով, կալվածատերերն ու նրանց պճնամոլ տիկինները վատնում են այդ խաղատներում, և պարտքի տակ ընկնելով հարկադրված դիմում վերջին խանութպանին՝ փոխառություն վերցնելու, պատրաստակամություն հայտնելով գրավ դնել իրենց կալվածքները ու ճորտերին։

Իսկ երբ դրամ ձեռք բերելու բոլոր միջոցներն սպառվում են, դատարկ քսակներով մտնում են նրանք գոհարեղենի «մագազինները» և «սխալմամբ» մի բան վերցնում. Ամուսինը հասարակական կարծիքից իր պատիվը փրկելու համար հարկադրված վճարում է «կլեպտոմանիայով» տառապող իր կնոջ գողացած իրի արժեքը։

Այսօրինակ փաստերով Շիրվանզադեն մերկացնում է բուրժուական աշխարհի հասարակական միջավայրը, նշավակում բարոյապես ընկած «ազնվականի» անազնիվ վարքագիծը։

Շիրվանզադեի մեմուարները լեցուն են մարդկային արժանապատվությունը ոտնահարող հարուստների անմարդկային վարքագծի դրսևորումների նկարագրություններով։ Բայց ավելի անարդար ու զայրացուցիչ է քաղաքական-դիվանագիտական այն միջավայրը, ուր ոտնահարվում են փոքր ժողովուրդների և փոքր պետությունների իրավունքները։ Որքան էլ մեմուարիստը խուսափում է դիվանագիտական հարցերից, այնուամենայնիվ, գրող քաղաքացու անհանգիստ սիրտը չի կարողանում անտարբեր մնալ գիշատիչ տերությունների ագրեսիվ գործողությունները տեսնելով ու զգալով։

Շիրվանզադեն մեծ հումանիստ է, բարձր կուլտուրայի տեր գրող։ Բուրժուական աշխարհի վայրագ միջավայրում նա վեհանձնորեն բարձր է կանգնած մնում առօրյա մանր հարցերի մեջ ի՛նճող լաբիրինթոսից և կարողանում է տեսնել կյանքի բանաստեղծականն ու օրինակելին։ Երբ աշխատավոր մարդու արյուն-քրտինքի վաստակի կողոպտմամբ ձեռք բերած խանութում կամ միլիոնատիրոջ ճաշարանում նրան են վերադարձնում դրամի մոռացված մանրը մեկ կամ մի քանի օր հետո, ոսկու անսահմանափակ իշխանության դեմ ըմբոստացած գրողին չի խանգարում հաղթահարելու հարուստների նկատմամբ ունեցած ատելության զգացումը, և նա գոհունակությամբ հարգանքի տողեր է նվիրում դրամը վերադարձնող վաճառողուհուն, գնահատելով նրա բարեկիրթ վարմունքը որպես կուլտուրական վարքագծի օրինակ։

Այս առումով էլ պետք է գնահատել ու արժեքավորել մեծ հումանիստի մեմուարային գործերը, որը հնարավորություն կտա ըմբռնելու նրա իրարամերժ կարծիքներն ու մտահանգումները բուրժուական աշխարհի բարքերի նկարագրություններում։